ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ
Բան. գիտ. թեկնածու
ORCID ID: 0000-0002-8593-0957
Էլհասցե՝ ghazaryan-ani@mail.ru

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԵՐՊԱՐԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ամփոփում

Մեր հոդվածը նվիրված է ազգի նվիրյալների՝ Ամենայն Հայոց Բանաստեղծ Հովհ. Թումանյանի և անզուգական Վարպետ Ավ. Իսահակյանի հայրենասիրական թեմայով գրված արձակ և չափածո ստեղծագործությունների ուսումնասիրմանը: Մենք կատարել ենք նպատակային ընտրություն՝ քննության առարկա դարձնելով հիմնա-կանում տասնիններորդ դարավերջում և քսաներորդ դարասկզբում գրված քնարական բնաստեղծությունները և արձակ ու չափածո գրված առանձին ստեղծագործությունները, որոնցում հայրենասեր բանաստեղծներն արձագանքում են աղետլի իրադարձություններին և իրենց տագնապած սրտերի խոսքն ուղղում հարազատ ժողովրդին:

Մարդակեր գազանը դարավերջում Արևմտյան Հայաստանում իրականացրեց նախադեպը չունեցող կոտորածներ, իսկ նոր դարի սկզբին՝ Հայոց Եղեռնը: Հայոց վիշտն ու ցավը սեփական վիշտ ու ցավ ընդունող բանաստեղծներն այդ ամենի ակամա ականատեսները դարձան: Նրանք ոչ միայն գրչով պայքարի դաշտ նետվեցին՝ վրեժի ու ցասման կոչեր հնչեցնելու հետ մեկտեղ ժողովրդին վերստին հիշեցնելով իր պատմական անցյալի փառավոր էջերն ու հերոս զավակներին: Գեղարվեստորեն արձագանքելով իրադարձություններին և ազգային ողբերգությունը դարձնելով իրենց ստեղծագործությունեների գլխավոր առանցքը՝ հայրենասիրական երգերում կատարած ազգային և համամարդկային ընդհանրացումներով Թումանյանն ու Իսահակյանը ոչ միայն փառաբանում էին հայրենիքի համար իրենց կյանքը զոհած քաջորդիներին, այլև ազգին համախմբվելու կոչեր էին հնչեցնում՝ առանձնահատուկ ընդգծելով ժողովրդի լուսավոր ապագայի չթաքցվող լավատեսությունը:

Բանալի բառեր և արտահայտություններ. հայրենանվեր բանաստեղծներ, աստվածընծա պարգև, դարակազմիկ իրադարձություն,

ժողովրդի ճակատագիր, զգայուն սիրտ, գրչեղբայրներ, հայրենիք, հույս, հավատ, վիրավոր:

Ներածություն

Հայ նոր գրականությունը կերտած գրչեղբայրներ Հովհաննես Թումանյանն ու Ավետիք Իսահակյանն ազգային բանաստեղծներ են առաջին հերթին իրենց ստեղծագործական խառնվածքով և աշխարհայեցողությամբ: Քաջ գիտակցելով, որ գրականությունը մարդու և ժողովրդի մասին իմացության ամենահավաստի բնագավառն է, նրանք ժողովրդից ու իրականությունից կտրված չապրեցին, գրական և հասարակական կյանքում մշտապես եղան ժողովրդի հետ ու ժողովրդի համար: Միանգամայն օրինաչափ է, որ հերոսներին ընտրեցին ժողովրդի միջից, որովհետև կանգնած էին սովորական մահկանացուների շարքում, ապրում էին նրանց հոգսերով և ուրախություններով, կիսում նրանց վիշտն ու ցավը: Նրանք, որ աշխարհ էին եկել իրենց բյուրեղյա հոգիների անմար լույսն ու ջերմությունը մարդկանց և աշխարհին տալու սուրբ առաքելությամբ, հավատարիմ մնացին աստվածընծա առաքելությանը՝ գեղարվեստորեն արձագանքելով ժամանակի իրադարձություններին՝ հայ ժողովրդի ողբերգությունը դարձնելով իրենց ստեղծագործությունների գլխավոր առանցքը:

Հայրենանվեր բանաստեղծները թեև իրենց կամքից անկախ երկրում կատարվող ողբերգական իրադարձությունների ականատեսներն ու մասնակիցները դարձան, սակայն հայրենիքի և տարաբախտ ժողովրդի ճակատագիրը սեփականից չտարանջատող նվիրյալներն այդ ամենի սոսկ դիտորդները չէին, ավելին մարդու ողբերգական ճակատագրի ամենասուր վերապրողները դարձան: Առանց վարանելու կարելի է վստահաբար ասել, որ նրանց կյանքի և ստեղծագործության տարեգրությունը միաժամանակ այդ իրադարձությունների տարեգրությունն է: Ահա թե ինչու նրանք անկարող էին խեղդել իրենց հոգիներում ծովացող խռովքը, երբեք չլռեցին, զոր ու գիշեր տագնապի ահազանգ հնչեցրին, երբ վտանգված էր հայրենիքի ճակատագիրը և կոտորվում էր բովանդակ մի ազգ՝ հարազատ ժողովրդի թշնամիներին խարանելով ինչպես հարկն է ու վրեժի և ցասման կոչեր հնչեցնելով: Նրանց նրբազգաց սրտերի միջով են անցել աղետաբեր ժամանակների մրրկալից փոթորիկները, հայրենիքում անվերջ կատարվող աննկարագրելի ողբերգությունները, ժողովրդի տառապանքը, ցավը, վիշտը, անդառնալի կորուստները և անվերջ ժայթքող ցասումը, ինչպես նաև վաղվա օրվա հանդեպ ունեցած անխորտակելի հույսը, հավատն ու լավատեսությունը: Միանգամայն օրինաչափ է, որ երկու դարի արանքում ծնված բանաստեղծների՝ ազգային և համամարդկային ընդհանրացումներով հայրենասիրական երգերը պիտի ծնվեին նրանց փոթորկահույզ հոգիների երկունքի ցավերից, որովհետև

օրեցօր ծավալվող հայկական ջարդերը, բնօրանների ու օջախների ավերումը, մարդկանց տեղահանությունը նրանց ստիպում էին կռվել ոչ միայն զենքով, այլ նաև գրչով՝ դառնալով թուրքական բռնակալության դեմ պայքարող հայրենիքի վրիժառու և անձնազոհ մարտիկներից:

Մեթոդաբանությունը

Կիրառել ենք գեղարվեստական գրականության արժևորման մի շարք մեթոդներ՝ վերլուծական, քննական, համեմատական, համադրական, ինչպես նաև օգտվել ճանաչված հայ գրականագետների և տեսաբանների ուսումնասիրություններից:

***

Ազգային բանաստեղծ Հովհաննես Թումանյանի զգայուն սիրտն ու հոգին դառնությամբ էին լցվել և տակնուվրա էին լինում ազգային-ազատագրական պայքարի առկայծող հույսերից ու դրանց անսպասելի խորտակումներից ծնվող հուսախաբությունից, ուստի նա անբեկանելի որոշում կայացրեց՝ հարազատ ժողովրդի փրկության զոհասեղանին դնել թե' իր կյանքը, թե' գրական տաղանդը: Խոսքի ու զրույցի նստելով աշխարհի հետ՝ նա անկասելի ցասումով բողոքեց անողոք ժամանակի դեմ, որը խորտակում էր հայ ժողովրդի ազգային իդեալները, իսկ աշխարհը հիմնականում ոչ միայն կույր էր, այլև՝ խուլ, իսկ խոստումներ շռայլելու և կեղծ գթասրտություն ցուցադրելու հարցում մրցակցությունից դուրս էր: Թումանյանը չէր կարող շեղվել ժամանակի (որի մասին մի առիթով նշել է, որ <<ոչ մի հանճար չի կարող արհամարհել, անտեսել նրան>>) պահանջներից և առաջադրած թեմայից, ուստի բնական է, որ նրա կերտած գեղարվեստական իրականությունն իրական կյանքի կրկնությունը չէր կարող լինել, այն ձևաիմաստային որակական փոփոխության էր ենթարկվելու, ինչը պայմանավորված էր գրողի աշխարհըմբռնմամբ: Զ. Ավետիսյանն իրավացիորեն նշում է, որ <<Թումանյանի ներկայացրած գեղարվեստական իրականությունը ոչ միայն կյանքն է, այլև ձգտումը դեպի կյանքի կատարելությունը>>[1], ինչի արդյունքում հայրենիքին նվիրված նրա չափածո երգերում բանաստեղծի իդեալն ու ժողովրդի իդեալը միաձուլված են ներկայացվում:

Վաղ շրջանի (1880-1910 թթ.) ստեղծագործություններում (<<Հին կռիվը>>, <<Մեհրին>>, <<Տրտմության սաղմոսներ>>, <<Մեր ուխտը>>, <<Դեպի Անհունը>>, <<Հայոց լեռներում>>, <<Վերջին տագնապը>>,

[1] Զ. Ավետիսյան, <<Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան>>, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1973, էջ 22:

<<Հայրենիքիս հետ>>, <<Դժոխքի հանդեպ>>, <<Հոգեհանգիստ>> և այլն) ակնհայտ նկատվում է բանաստեղծի ազգային ոգին, ազգի պատմության և ճակատագրի ընդհանրացումը, որովհետև 1890-ականների ջարդերը յուրատեսակ ազդակ դարձան հայրենասիրական մի ամբողջ շարքի համար Ի դեպ, <<Հառաջ>> թերթի 1919 թ. հունվարի 26-ի թիվ 11 համարում տպագրված <<Պատանեկության օրերից>> հուշագրությունում, խոսելով իր և դաշնակցության հիմնադիր անդամներից Ստեփան Զորյանի (Ռոստոմ) մտերմության մասին, Թումանյանը հիշում է <<Հին կռիվը>> պոեմի մասին. <<Պոեմը թեև գրելիս բոլորովին փոխվեց և ուրիշ բան դուրս եկավ, բայց ես նվիրեցի Ստեփանին>>: Իսկ հետո ավելացնում, որ հունվարի 19-ին <<ռուս ժանդարմները խուզարկեցին, տարան կորցրին էդ պոեմը և միայն մի երկու կտոր պատահմունքով գտա, որ տպվեցին>> <<Տանը>>, <<Երկրում>> և <<Հայոց լեռներում>> վերնագիրներով>>[2]: <<Հին կռիվը>> պոեմը ներկայացնում է արևմտահայության ողբերգությունը, երբ ամեն տեղ ու ամենուր հոսում էր տարաբախտ ազգի արյուն-արցունքը, <<Եվ դեռ սոսկալին չի եկել իսկի…>>: Գլխավոր հերոս Վահանը սրտի մորմոքով է խոսում հալածվող հայրենակիցների՝ <<տկլոր, բոպիկ ու քաղցած>> հայ գաղթականների մասին: Նրա նախակերպարը Վարդան (Ալեքսանդր) Գոլոշյանն է, ով գաղտնի մեկնել ու անմահացել է Արևմտյան Հայաստանի համար մղված կռիվներում: Բանաստեղծի և ժողովրդի միասնության խոսուն վկան է <<Նախերգանք>> բանաստեղծությունը, ուր քնարական հերոսն անդնդախոր ձորերի խորությունն իր սրտի անամոք վերքերին է նմանեցնում և նրանցով չափում իր տրտմությունը (Դուք է՞լ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր, Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր…):

<<Հայոց վիշտը>> բանաստղեծությամբ Թումանյանը բացահայտ հավաստում է, որ ժողովրդի և իր վիշտը նույնն են, դրանք անհնար է տարանջատել, որովհետև երկուսի ճակատագրերն էլ նույնն են թե՛ տառապանքի մեծությամբ, թե՛ խորությամբ: Հայոց վիշտն անհատակ մի ծով է, իսկ բանաստեղծն այդ վշտի ծովի մի մասնիկն է, ձուլվել է նրան և համազգային վիշտը համարում է իր անձնական ողբերգությունն ու ցավը: Վշտին հաջորդում է լեռներում ձգվող ճանապարհը, որը ժողովուրդն անցնում է՝ աղետների ու զանազան փորձությունների ենթարկվելով: Գոյության և ազատության համար մաքառում, ստացած դաժան ու դարանակալ հարվածներ, դարերի անլույս մթնում քայլելու երթ, ուժերի գերագույն լարումով ծով զանձերի ստեղծում: Ահա թե ինչպիսին է

[2] <<Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմություն>> (1915-1919), ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատ., Ե., 2019, էջ 642:

հազարամյակների պատմություն ունեցող ժողովրդի անցած ճապարհը, որը, թվում է, թե անդունդ է տանելու, սակայն ազգային ողբերգության մասին խոսելիս լավատեսությունը չի լքում նրան, համամարդկայինը չանտեսող բանաստեղծը կանաչ լույս է վառում <<դեպի լույսը մեր ուխտի>> (<<Մեր ուխտը>>), որին հասնելու են չար բախտի բյուր հարվածներին դիմակայելով ու զրկանքներին դիմանալով: Խավարի թագավորության հետ չհամակերպվելով՝ դեպի վեր էին գնում, դեպի լույսն էին ձգտում նաև <<Հայոց լեռներում>>:

<<Հայոց լեռներում>> քնարական բանաստեղծությունն առաջին հերթին աչքի է ընկնում բովանդակության և ձևի միասնականությամբ, ինչի շնորհիվ հեղինակը ներկայացնում է հայ ժողովրդի կյանքն իր խորությամբ, բարձրաձայնում է նրա՝ տառապանքով շաղախված պատմության փիլիսոփայությունը և հասնում գեղարվեստական ընդհանրացման՝ վեր հանելով հայոց բազմաշերտ պատմության էջերը: Խոսելով խավարով ու մշուշով պատված ճապարհի, կրած անլուր տառապանքների և զրկանքների, ստեղծած անկրկնելի ու անհամար գանձերի, ստացած անթիվ վերքերի, ինչպես նաև հույսերի մասին, նա կրկին չի անտեսում համամարդկայինը: Համարձակորեն բացահայտում է շեկ անապատներից եկած զավթիչների զարկած ու զրկած քարավանի ճամփան, որն անավարտ է ու ձգվում է հայոց <<դրժար>>, <<բարձր>>, <<արնոտ>>, <<սուգի>>, իսկ վերջնարդյունքում՝ <<կանաչ,>> լեռներում, որն անառարկելիորեն հավաստում է, որ բզկտված քարավանի ճանապարհին անպայման բացվելու է <<պայծառ առավոտ>>: Լեռներին տրված բնութագրումները ինքնպատակ չեն. <<դժար լեռները>> մեր ժողովրդի անցած ուղին է, <<բարձրը>> խորհրդանշում է նրա կերտած հոգևոր գանձերը, <<արնոտ> և <<սուգին>> փաստում են տառապանքն ու վիշտը, իսկ <<կանաչը>> կյանքի և երջանկության գաղափարն է, անսքող լավատեսությունն ապագայի հանդեպ:

Այս գողտրիկ բանաստեղծությամբ Թումանյանն անխորտակելի հավատով է պատկերել հայրենիքի անպարտելի ու ստեղծագործ ոգին, խոսել հարազատ ժողովրդի դարավոր պատմության, մաքառումների տանջալից ուղու մասին: Ներկայացնելով անցած ճանապարհը, ինչպես նաև անապատի միջով անցնող քարավանը, որը շարունակում է իր երթը դեպի վեր, թեև ճանապարհին անվերջ ենթարկվել է թշնամիների ու քոչվոր ցեղերի ասպատակություններին, թալանվել ու զարկվել, կերտում է հայ ժողովրդին՝ անընկճելի մաքառողին նվիրված ինքնատիպ ձոնը.

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անլույս մըթնում
Երկա՜ր դարերով գնում ենք դեպ վեր

Հայոց լեռներում,
Դրժար լեռներում[3]:

Բանաստեղծը վերստին հաստատում է այն հայտնի ճշմարտությունը, որ գրականությունն իրական կյանքի հայելին է, նրա գեղարվեստական պատկերը: Դարակազմիկ այդ օրերին հայոց վիշտն անսահման էր ու անափ, այն անհուն ու խավար մի ծով էր, ուր գիտակցաբար լող էր տալիս վշտահար բանաստեղծի հոգին, որն այնքան մեծ էր, որ չէր հասնում երկնքին, ոչ էլ գտնում էր հատակը ծովի: Իսկ ինչպիսին էր լինելու այդ դժվարին ու տառապանքով լեցուն վերելքի վախճանը: Չնայած բազում դժվարություններին, անլուր տառապանքներին ու հալածանքներին, քարավանը շարունակում է դժվարին ճանապարհը՝ <<…տանելով իր վերքերն անհամար>>, իսկ երկնքի ծերին անթարթ հայացքը հառած հեղինակն անսասան հավատով հարց է տալիս, թե երբ կբացվի պայծառ առավոտ <<Հայոց լեռներում, // Կանաչ լեռներում>>, ինչը վերստին վկայում է նրա այն լավատեսության մասին, որ մեր ժողովուրդը դարեր ի վեր սուրը ձեռքին պայքարելուն զուգահեռ արարել է, կերտել և գոյատևել, ուստի պատմության քառուղիներում երբեք չի մոլորվի: Արվեստի բովանդակությունը ժողովրդի կյանքը դարձրած բանաստեղծի մասին խոսելիս Հ. Թամրազյանը տեղին է նկատել. <<Թումանյանը ստեղծում է հայրենիքի կերպարը գրականության մեջ, քաղաքական, սոցիալական և բարոյական, զուտ հայկական և համաշխարհային դրամատիկ անցումներով>>[4]:

Հայոց ողբերգության մասին խոսելիս լավատեսությամբ համակված Թումանյանը չի շրջանցում մարդու և մարդկայնության հարցը: Ասվածի վկայությունն են <<Հայոց լեռներում>> և <<Հոգեհանգիստ>> բանաստեղծությունները: Առաջինի մասին արդեն նշել ենք, իսկ երկրորդն իրապես պատմության թատերաբեմից անհետացող բովանդակ մի ազգի ու հայրենիքի հոգեհանգիստն է. բանաստեղծը ցանկանում է վերջին հանգիստը կարդալ <<իմ ազգի անբախտ զոհերին>>, որովհետև ամենուր ավեր էր, մահ ու սարսափ: Վեհ բարձունքում Մասիսի նման մենակ ու հպարտ կանգնած նա լուռ ու անխոս նայում է երբեմնի դրախտավայրին.

---

[3] Հովի. Թումանյան, ԵԼԺ, հ.1, Ե., 2018, էջ 224:

[4] Հ. Թամրազյան, <<Բանաստեղծության հազարամյա խորհուրդը>>, Ե., <<Սովետական գրող>> հրատ.,, 1986: էջ 110:

Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով
Մարած են, մեռած, փլռված, ցրրված հազար հազարով…[5]

Այն ավերակների էր վերածվել անթաղ մեռելներով ու անբախտ զոհերով, ինչից սիրտը տակնուվրա է լինում, իսկ հոգին՝ փոթորկվում: Նա հոգեհանգիստ է կարդում, նրան ասես ձայնակցում են ամպերի մեջ կորած լեռնագագաթները, ցավից հորդացած ու պղտորված գետերը, ապա սաղմոսներ է կարդում, իսկ անթաղ դիակների ու անանուն գերեզմանների վրայով դանդաղ քայլող ուղտերի նմանվող մռայլված ամպերը երկնքից արցունքներ են շաղ տալիս: Այս տխուր ու ցավագին պատկերին լրացնելու է գալիս ողբերգակի տառապած սրտի կանչը.

Հանգե՞ք, իմ որբեր… Իզո՞ւր են հուզմունք, իզո՞ւր և անշահ…
Մարդակեր գազան՝ մարդը դեռ երկար էապես կմնա… …[6]

Հայ ժողովրդի ողբերգությունը համամարդկային ողբերգություն համարող բանաստեղծն ցավագնորեն է հոգեհանգիստ կարդում իր տառապյալ ժողովրդի անմեղ զոհերին, որովհետև այդ ոճրագործության անմիջական ականատեսն էր ու լռել չէր կարող, պիտի բարձրաձայներ ճշմարտությունը և գրականություն բերեր նավաբեկվող ազգին մտահոգող գլխավոր հարցը՝ որտե՞ղ գտնել փրկության ափը, ինչպես նաև միանշանակ պատասխանը տար՝ հայի փրկությունը հայի անմահ ոգու մեջ է, եթե կարողացան կոտրել հայի ոգին, կկարողանան բնաջնջել հայությանը: Թյուր կարծիք չպետք է կազմել, թե նա միայն հոգեհանգստի խոսք է ասել իր ժողովրդի զավակների վրա, որովհետև նույն բանաստեղծությամբ հայի ճակատագրի ինքնատիպ լուծում է տալիս՝ այն կապելով մարդու մարդկային նկարագիրը վերագտնելու և ազգերի խաղաղ կյանքի հեռանկարի հետը՝ հոգեհագստի խոսքն աննկատ վերածելով օրհնության խոսքի:

<<Ծաղակավետ>> ու <<վշտակիր հայրենիքին>> պատուհասած աղետները ոչ թե խորտակում, այլ ալեկոծում էին աշխարհը բանտ համարող բանաստեղծի հոգին, ինչից ծնունդ էին առնում հայրենիքին նվիրված անկրկնելի կոթողներ: Մեծ Եղեռնի օրերին գրված <<Հայրենիքիս հետ>> բանաստեղծության յուրաքանչյուր տուն մեր դառնաղետ պատմության արտացոլանքն է: Առաջին երկու քառատողերում գաղթական

[5] Հովի. Թումանյան, ԵԼԺԿ, հ1, Ե., 2018, էջ 298:
[6] Նույն տեղում:

զավակների լուռ շարքերից, տխուր, դատարկ ու խավար գյուղերից մղկտում է նրա ալեկոծվող հոգին, ինչից ծնվում են <<զարկված ու զրկված, ողբի ու որբի հայրենիքի>> ահասարսուռ պատկերները, որոնց հաջորդում են ջարդարար ռիմակների վայրագությունները սև ու սուգի, ողբի և որբի հովիտի վերածված հայրենիքում, ապա դուրս է հորդում բանաստեղծի լավատեսությունը՝ դեպի լույսը վստահորեն ընթացողի հոգու խոսքն այն մասին, որ խավարը հավիտենական չի կարող լինել: Ազատագրված հայրենիքը դառնալու է <<լույսի և հույսի, նոր ու հզոր հայրենիք>>, ի վերջո նա իր ծանրակշիռ խոսքն է ասելու կույր ու խուլ աշխարհին, իսկ երկնահաս <<քո բարձունքին. Արարատի սուրբ լանջին>> կենսաժպիտ իր շողերը կսփռի <<կյանքի արշալույսը վառ հագած>>: Նկարագրելով հայ ժողովրդի վիշտը, դարավոր պատմությունը՝ բանաստեղծը կրկին չի թաքցնում փրկության հույսը և վաղվա ավելի պայծառ առավոտ ունենալու լավատեսությունը: Գրականագետ Լ. Հախվերդյանի գնահատմամբ <<Եթե <<Հոգեհանգիստը>> աղետյալ ժողովրդի ռեքվիեմն է, ապա այս բանաստեղծությունը նրա կյանքի հիմն է՝ հանդիսավոր ու վեհաշունչ>>[7]: Բանաստեղծը կարդում է հայոց անհամար զոհերի վերջին հանգիստը՝ մոմերի փոխարեն հրդեհի կարմիր բոցերից վառելով հայոց աշխարհի լեռները, ապա <<հանուն կյանքի արշալույսի>> իր սրբազան պատգամն ուղղում սերունդներին.

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՜ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՜ր հայրենիք,
Հըզո՜ր հայրենիք…[8]

Հայկական հարցն ու հայ դատն իր կյանքի նպատակներից գլխավորը համարող Իսահակյանը, որն ազատություն էր տենչում նախ և առաջ իր ժողովրդի համար, նույնպես չէր կարող համակերպվել դարավերջին Արևմտյան Հայաստանում կազմակերպված կոտորածների հետ: Նա, ով պատրաստ էր կայծակե սուրը ձեռքին պատռել մարդկանց քարե սրտերը,

[7] Լ. Հախվերդյան, <<Թումանյանի աշխարհը>>, <<Հայաստան>> հրատ., 1966, էջ 468:
[8] Հովհ. Թումանյան, ԵԼԺԿ, հ1, Ե., 2018, էջ 360 :

առանց վարանելու հրապարակեց <<Հայդուկի երգեր>> շարքը, որը հարգանքի տուրք էր ոչ միայն ազատագրական պայքարի դուրս եկած խիզախ հայդուկներին, այլև <<խորը վերքը սրտին ընկած>> անանուն հերոսներին՝ իր քնարական այն հերոսին, որը պատրաստ էր ինքնազոհության և երդվել էր հայրենիքի ազատագրական պայքարի մասնակիցը դառնալ ու զենքը ձեռքին անմահանալ: Ազգի նվիրյալներն այն բացառիկ հերոսներն են (Գուրգեն Մալեյան, Ավետիք Մալոյան, Եգոր Առստամյան, Սևքարցի Սաքո, Եփրեմ Խան Սարդար, Սիմոն Զավարյան և ուրիշներ), որոնց հոգիները սավառնում են մեր գլխավերևում, ովքեր <<թիթեռների պես՝ չքնաղ, զվարթ>> սուզվում են սիրավառ ազատության մեջ՝ իրենց այրումով վերստին բորբոքելով պայքարի մշտավառ հուրը, որոնց գերազմանը վերք պիտի դառնա մարտի նետվող նորանոր ջահակիրների սրտերում: Նրանք այն հերոսներն էին, ովքեր գիտակցում էին իրենց անօրինակ խիզախումների նպատակը, հանուն հաղթանակի նետվել էին պայքարի, հարձակվում էին մահվան վրա՝ երբեմն էլ սեփական մահվամբ վերջինիս հաղթելով: <<Ռուսական ախպեր>> բանաստեղծությունը վստահաբար կարելի է համարել ոչ միայն ֆիդայական շարժմանը, այլև հետագա տարիների հայոց ազատագրական պայքարի մարտիկներին նվիրված բացառիկ օրհներգ: Այն սգավոր մոր ողբ չէ, որովհետև նրա հարցադրումները սպառիչ պատասխաններ են ստանում, որին հաջորդում է խորհրդավոր, բայց նաև անչափ խոսուն լռությունը, քանզի սիրած յարի համբույրի փոխարեն հերոսի սրտին վարդեր էին ծլարձակել.

Սարի մարմանդ հովն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներն են վրրան սրգում,
Ազիզ բալիդ, խեղճ լալիդ…

Երկրորդ կարծիք լինել չի կարող, որ այս գլուխգործոցային բանաստեղծության անանուն մայրը Հայրենիքն է, որ սգում է տարաբախտ զավակների կորուստը: Այս շարքի շնորհիվ <<Իսահակյանի պոեզիան դառնում է հայ ժողովրդի յուրովի հոգևոր կենսագրություն>>[9]:

Հայրենի երկրի սարերը երկինի մովի մեջ էին, ջրերն ու հովերն անուշ, հայրենիքը, ինչպես երբեք, սիրուն էր, սակայն օտարության մեջ ապրող Իսահակյանի սիրտը տնքում էր այն անամոք ցավից, որ նրա <<բալեքն>> արյան ծովի մեջ էին, ինչից տագնապած հոգով բանաստեղծի օրերը տրտում էին և սև էին անցնում, սիրտը պղտորվել էր Արաքսի ջրերի պես, այդ իսկ

[9] Ավ. Իսահակյան, ԵԼԺ, ՀՀ ԳԱ <<Գիտություն>> հրատ., հ1, Ե., 2003, էջ 796:

պատճառով նա <<անհագ վրեժի և ըմբոստացման>> (<<Ազատության զանգ>>) զանգն է հնչեցնում, որի դողանջները լեռներում ու ձորերում պիտի տարածվեին, դարավոր նիրհից արթնացնեին ամենքին և ամեն ինչ ու մարդկանց ուղեկցեին <<մահվան ու փառքի>> պայքարի դաշտ: Այդ դաժան և դառն օրերում, երբ վրեժի ու ատելության դժոխքն այրում էր նրա թունոտ հոգին, բանաստեղծը գիտակցաբար մարդկանց սրտերում վառում է <<հուրն ատելության և իրավունքի>> (<<Անհուն վրեժի և ատելության>>), որովհետև եկել էր ժամն արդար զայրույթի և ազնիվ պայքարի: Այլ ճանապարհ չկար.

Կամ պետք է մեռնել, կորչել հավիտյան,
Կամ բարձրացնել դարձյալ հաղթական
Դրոշակը մեր իդեալների[10]:

Լեռնացել էր բանաստեղծի մեծ ցասումը, որը կամենում էր <<փշրել կյանքի շղթաները>> ու հայրենիքի վերքերը բուժելուն զուգահեռ ժողովրդին առաջնորդել դեպի լույս և ազատություն: Պատմության չարագուշակ այդ օրերին ազգային ազատագրական պայքարը դառնում է նրա ստեղծագործության բովանդակության առանցքը, քնարական երգերում անձնական ողբերգությունը դանդաղորեն վերածվում է ազգայինի, իսկ ազգայինից՝ համամարդկայինի: Պայքարի խանդավառ երգիչը գտնում էր, որ ազգին պետք է իսկական առաջնորդ, իսկական հերոս ու դյուցազուն, որն իր շուրջ պիտի համախմբեր նվիրյալներին՝ ժողովրդին ազատության փրկարար ափ դուրս բերելու նպատակով: Իր երազած Հերոս-Հենի-Գերմարդի որոնումները նրան տանում են հայոց պատմության խորքերը, և ծնվում է <<Մասըսա Մանուկ>> վիպասքը, որի երևակայական հերոսը Մանուկ Հայաստանի խորհրդանիշն էր: Իրականության գեղարվեստական պատկերմամբ վիպասքում համադրվել են քնարական ու դրամատիկական ժանրերը՝ անցյալը, ներկան ու ապագան ներկայացնելու համար: Մեփական ուժերին ապավինած ժողովրդի ատելության և ցասման կրակով բռնկված աշխարհազորայիները դարակազմիկ հաղթանակ են տանում: Դյուցազն Մասըսա Մանուկի և արյունարբու Դև Սուլթանի մենամարտը ստեղծագործությունում ծավալվող իրադարձությունների բարձրակետն է, հեղափոխական էպոսի գլխավոր հակամարտության հանգուցալուծումը:

Ստեղծագործական փնտրտուքները Իսահակյանին դարձյալ դեպի ժողովրդի փառավոր անցյալ են տանում, դեպի ազգային դյուցազնավեպ, որի հերոսներից Փոքր Մհերը սրտամոտ էր իրեն, այն հերոսն էր, որը

[10] Նույն տեղում, էջ 770:

կարող էր բացահայտ մարտահրավեր նետել դարաշրջանին և անտարբեր ու անարդար աշխարհին: Մհերը <<Սասմա Մհեր>> վիպերգի գաղափարական բովանդակությունը կրողն է, ներկայացնում է մեր ժողովրդի ոչ միայն փառավոր անցյալի կարևոր ժամանակաշրջանը, այլև հային՝ իր խոհերով ու երազանքներով, աշխարհընկալումով և առողջ դատողությամբ, իսկ այնուհետև կարծես կանխատեսում է նրա ապագան. <<Նա պիտի դառնա մեր աշխարհին տեր,-// Ով զերկաթն իշխե՝ իշխանն է մարդուս>>: Հերոսի ընտրությունը նպատակային է կատարվել. բանաստեղծի հայեցակետով էպոսում Մհերին ժողովուրդը ոչ թե մահվան, այլ անմահության է դատապարտել՝ վաղվա լուսավոր օրվա հույսը նրանից ակնկալելով և սպասելով իր բարերարի ազատագրմանը: Այդ նպատակին հետամուտ, Մհերին դուրս է բերում քարանձավից, որպեսզի <<հայ ժողովրդին ազատագրի դարավոր բանտից>> և փրկի գերությունից ու կեղեքումից: Հերոսը ներկայացվում է որպես մեր ժողովրդի դարավոր իղձերի մարմնացում, ում համար ժողովրդի թշնամին նաև իր թշնամին էր՝ բնավ չթաքցնելով, որ աստվածամարտ հերոս Մհերը հայ ժողովուրդն է, որը կարող էր ինքն իրեն ազատագրել: Ավ. Իսահակյանն այս վիպերգով իրականացրեց իր վաղեմի երազանքը. այն, ինչ չկարողացան անել նրա հերոսներ Մասըսա Մանուկն ու Ուստա Կարոն, իրականություն դարձրեց Մհերը:

Հայրենիքի ճակատագիրը սեփական ճակատագիր ընդունող բանաստեղծը տիեզերական վիշտը զգում և հասկանում էր հայության վշտի միջոցով, իսկ հարազատ ժողովրդի վիշտը համամարդկային վիշտ էր ընկալում, ուստի բնավ էլ պատահական չէ, որ առաջիններից էր, ով <<Հայաստանին>> բանաստեղծությամբ արձագանքեց թումանյանական պատգամին, ինչը յուրատեսակ ձոն է՝ նվիրված վերածնված ու նորամանուկ Հայաստանին: Նոր խոսքը հայրենիքի անցյալի, ներկայի ու ապագայի համապարփակ վերլուծություն է: Ճշմարիտ խոսքի ավետաբեր հինավուրց հայրենիքը հազարավերք էր, որովհետև նախկինում արդարության ցորեն արտի արորներն արյունազանգ էին դարձել, <<քաղաքների մոխիրներից ծլած վարդերն արյուն-բուրող>> էին, շարականները՝ հոգեբուխ, շինականի երգը՝ լալահառաչ, որբուկները՝ մերկ ու ծարավ, իսկ սփոփանքի խոսքերն ունայն էին: Սակայն հնուց ուխտի վկայական և ավանդատուն հայոց աշխարհի դարավոր հույսերն ու երազներն ի վերջո իրականություն դարձան, ինչը ցնծությամբ ընդունեց բանաստեղծը.

Արդարախոս ու մեծասքանչ քո հին լեզվով օրհներգըված,
Լուսավորչի լույս կանթեղով երկինքներըդ լուսերանգված,
Անճառելի ու դարերի տանջանքներով հոգիացած …[11]

Մինչ այս ինքնատիպ օրհներգը, հայրենիքի փրկության սուրբ գործին զինվորագրված Իսահակյանի վիրավոր սրտից ու հոգուց ծնված երգերը ողբ ու լաց չէին, դրանցում ակնհայտ էին անտեսանելի ցավն ու տառապանքը, որոնք շաղախված էին անբեկանելի լավատեսությամբ առ այն, որ կյանքի ու մահվան անհավասար կռվի մեջ մտած հայ ժողովրդի պայքարը հանուն լուսավոր ապագայի հաղթական ավարտին են հասցնելու նրա առյուծասիրտ զավակները: Ազգանվեր մահապարտները <<հայու ծով-վրեժի սուրբ թուրն էին>>, ովքեր <<մեկ սիրտ դարձած>> պատրաստ էին զարկել ու զարկվել հանուն իրենց վաթանի, բյուր սուր դարձած ջարդեին ու փշրեին թշնամուն, վանեին խավարը, որպեսզի հայոց երկնքում կրկին փայլեր <<ազատության արևն հզոր>>: Սեփական ինքնության ակունքները հայրենասեր բանաստեղծին ստիպում էին նորովի ինքնաբացահայտվել, որովհետև հայտնվել էր մի այնպիսի ցնցող իրականության մեջ, երբ հայրենիքի սարերը երկնքի մովի մեջ էին, ջրերն ու հովերն անուշ էին, մինչդեռ <<բալեքն արյան ծովի մեջ էին>>: Անամոք ցավը հաղթահարելու աներևակայելի, միգուցե նաև գերբնական ճիգ էր պետք, որովհետև Սուրբ Հայրենիքին ձոնված նրա երգերն իրապես հոգու անտեսանելի ցավերից էին ծնվում: Կյանքի բուռն հորձանքներից ծնվող զգացողություններն ամբողջացնում էին նրա խոհերի ու մտորումների համակարգը՝ ամբողջացնելով բանաստեղծական մտածողությունը, ուր միաձուլվում են պայմանականն ու ռեալականը, ներդաշնակն ու աններդաշնակը, որոնց շնորհիվ իմաստուն հայացքով բանաստեղծը փորձում էր գտնել երկրի վերածնունդի սաղմերը:

Ի վերջո Հայոց երկիրն իր տոկուն զավակների անձնուրացության շնորհիվ դիմակայեց, ընկավ, բայց չծնկեց ու ոտքի կանգնեց հպարտ և անպարտ կեցվածքով: Վայրի ցեղերն անհետացան, իսկ հայոց խրճիթներից կրկին ծուխ է դուրս գալիս, հայրենի հողը վերստին նրա կտրիճ որդին է հերկում ու մշակում: Հոգու ցավից տնքացող բանաստեղծը չի թաքցնում հիացմունքն ու լավատեսությունն այն փաստից, որ երկիրը վերստին ծաղկել ու ցնծում է.

Դու պիտի ծաղկի՛ս, երկի՛ր հայրական,
Քո ոգով, ոգով, ոճով ու բարձրագլուխ:

---

[11] Ավ. Իսահակյան, ԵԼԺ, հ1, Եր., 2003, էջ 650:

Դու պիտի հնչե՛ս, հնչես հաղթական
Իմ հին հայ լեզու՝ քա՛ղցր ու սրտաբուխ[12]:

Գաղափարական և քաղաքական պայքարի նվիրյալ մարտիկներ Ամենայն Հայոց Բանաստեղծն ու Վարպետն իրենց ստեղծագործություններով մեկ անգամ ևս փաստեցին, որ հայ ժողովրդի անցած ուղին եղել է ոչ թե և ոչ միայն ջարդերի ու եղեռների պատմություն, այլև գոյատևման, սխրանքների, քաջագործությունների, արարման հերոսապատում: Իմաստուն այրերը երկրային կյանքին հրաժեշտ տվեցին հայրենիքի հանդեպ պարտքերը մարած ու հավատացած, որ հայ ժողովրդի դարավոր երթն անհնար է խաթարել:

Եզրակացություն

Հայրենիքի ճակատագիրը, նրա կրած անլուր տառապանքներն ու երջանկության որոնումները դարձել են ժողովրդի վշտի ծովում տառապող ու պայքարող Հովի. Թումանյանի և Ավ. Իսահակյանի իմաստուն խոհերի ու մտորումների կիզակետը և իրենց մնայուն տեղը գտել նրանց արձակ և չափածո ստեղծագործություններում:

Ազգային բանաստեղծները հավատացած էին, որ խավարը երբեք հարատև չի կարող լինել, վերածնության կենսական ազդակներից ցանկալի ազդանշաններ կստացվեն, ու խավարի դեմ պայքարում լույսն անպայման կհաղթի: Որևէ կասկած չի կարող լինել, որ նրանց անկրկնելի պոեզիան կատարելության է հասել հոգեկան մաքառմամբ, գալիքին, ժողովրդի լուսավոր ապագային լավատեսորեն նայելու անչափելի ցանկության և ջանքերի շնորհիվ:

Հին և նոր աշխարհների սահմանագծին հայտնված ու հայրենիքի նոր կյանքի երգիչը դառնալ երազող բանաստեղծներն իրենց ստեղծագործություններում յուրովի բյուրեղացրին դարերի իմաստությունը և, յուրացնելով սերունդների հոգևոր փորձը, եկան այն եզրահանգման, որ հայապահպանության ու հայրենիքի միակ երաշխիքը հայրենիքի և ժողովրդի միակամ լինելն է, նրանց միասնությունը:

Հայության վիշտն իրապես անչափելի էր, սակայն ցավը հայրենավեր ստեղծագործողներին չէր վհատեցնում, ընդհակառակը, պարտավորեցնում էր ստեղծել անհատակ անդունդի եզրին հայտնված ժողովրդի հոգու պատմությունը: Այդ նպատակին հասնելու համար բանաստեղծները հնի ու նորի միահյուսմամբ բացահայտում են իրենց տաղանդն ու հզոր

[12] Նույն տեղում, էջ 474:

մտածողությունը, իսկ նրանց հայացքների խորությունն անչափելի է, երբ քննում են հավերժականն ու արդիականը՝ իրենց հոգու լույսով լուսավորելով սերունդների ուղիները:

Օգտագործված գրականություն

1. Ավետիսյան Զ., <<Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան>>, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1973:
2. Իսահակյան Ավ., ԵԼԺ հ1, ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատ., Ե., 2003:
3. Թամրազյան Հ., <<Բանաստեղծության հազարամյա խորհուրդը>>, Երևան, <<Սովետական գրող>> հրատ., 1986:
4. Թումանյան Հովհ., ԵԼԺԿ, Երևան, ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատ., Ե., 2018:
5. <<Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմություն>> (1915-1919), ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատ., Ե., 2019:
6. Հախվերդյան Լ, <<Թումանյանի աշխարհը>>, Ե., <<Հայաստան>> հրատ., 1966:

Ани Казарян

Образ родины в произведениях Туманяна и Исаакяна

Заключение

Ключевые слова и выражения: Прославленные мастера, божий дар, эпохальное событие, судьбы людей, чуткое сердце, братья по перу, родина, надежда, вера, раненые.

Судьба родины, ее неведомые страдания и поиски счастья стали средоточием мудрых мыслей и размышлений О. Туманяна и Ав. Исаакяна, которые страдают и борются в народном море печали и нашли свое постоянное место в своих прозаических и стихотворных произведениях. Не может быть сомнения, что их неповторимая поэзия достигла совершенства через ментальное очищение, благодаря безмерному желанию и усилиям оптимистично смотреть в светлое будущее народа. Народные поэты верили, что тьма не может длиться никогда, жизненные импульсы возрождения будут давать желанные сигналы, и в борьбе с тьмой обязательно победит свет.

Они, оказавшиеся на границе старого и нового миров и мечтавшие стать певцами новой жизни Родины, кристаллизовали в своих произведениях мудрость веков и, переняв духовный опыт поколений, однозначно пришли к выводу, что единственной гарантией сохранения армян и Родины является единство Родины и народа, их единство. Горе армян было поистине

безмерно, но боль не угнетала их, наоборот, обязывала творить историю души народа, оказавшегося на краю бездонной пропасти. Для достижения этой цели поэты раскрывают свой талант и мощное мышление, переплетая старое и новое, и безмерна глубина их взглядов, когда они исследуют вечное и современное, освещая пути поколений светом своей души.

Ani Gazaryan

The character of the motherland in the works of Tumanyan and isahakyan

Conclusion

Key words and expressions: Renowned masters, gift from God, epoch-making event, destiny of the people, sensitive heart, pen brothers, homeland, hope, faith, wounded.

The fate of the homeland, its unknown sufferings and the search for happiness have become the focus of the wise thoughts and reflections of H. Tumanyan and Av. Isahakyan, that are suffering and struggling in the people's sea of sorrow, and have found their permanent place in their prose and verse works. There can be no doubt that their inimitable poetry has reached perfection through mental purification, due to immeasurable desire and efforts to optimistically look at the bright future of the people. The national poets believed that darkness can never last, the vital impulses of rebirth will give desired signals, and in the fight against darkness, light will definitely win.

They, who appeared on the border of the old and new worlds and dreamed of becoming the singer of the new life of the motherland, crystallised the wisdom of centuries in their works and, appropriating the spiritual experience of generations, definitely came to the conclusion that the only guarantee of the preservation of the Armenians and the motherland is the oneness of the motherland and the people, their unity. The grief of the Armenians was truly immeasurable, but the pain did not depress them, on the contrary, it obliged them to create the history of the soul of the people who appeared on the edge of the bottomless abyss. To achieve that goal, poets reveal their talent and powerful thinking by intertwining the old and the new, and the depth of their views is immeasurable when they examine the eternal and the modern, illuminating the paths of generations with the light of their soul.

Խմբագրություն է ուղարկվել 22.02.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 12.03.2023թ.
Հրապարակման է հանձնարարվել 28.04.2023թ.